

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարեկան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисть, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերէն)

Ցայտարարութիւնը ընդունվում է ամէն լեզուով.

Ցայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպեկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳԻՐԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՀԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՆԵՐԿԱՅ 1898 ԹԻՒ

ՄՇԱԿ

ԴՐՈՒՄՆԵՐՆԵՐ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԴՐԻ

«Մշակ» տարեկան գինը թէ՛ Ռուսաստանում և թէ՛ արտասահմանում 10 ռուբլի է, տասն
և մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝
6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ., մի
ամսականը 1 ռուբլի:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը (Բաղրամյան և Բարսեղյան փողոցի անկիւնը):
Ուրիշ քաղաքներից պէտք է դիմել այս հասցեով. ТИФЛИСЬ, редакция «М ш а к ъ», իսկ
արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien «Mschak».

Ցայտարարութիւնները ընդունվում են թէ՛ հայերէն, թէ՛ ռուսերէն և թէ՛ օտար լեզուներով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վիճակագրական տեղեկութիւններ.—ՆԵՐՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ուրբեք են չարագործները. Սովոր
ական ախտ. Նամակ Վարդապետայանից. Ներք
քին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին
տեղեկութիւններ. Պատերազմ. Փրկուի Միւր
լէր: Նամակ Ամերիկայից.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—
ՀՆՈՒՄԻՐՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
ՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Բաշօն:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Մեր առաջ մի կարևոր հարց է դրված.—
ինչպէ՞ս անենք, որ մեր երկրի ընթա
ցիկ կենսի գրութեան մասին ունենանք
ճիշդ տեղեկութիւններ: Ի՞նչ անենք,
որպէս զի գիտենանք թէ՛ ինչպէս է ընթա
նում երկրի բարեկեցութիւնը, արդե՞ք չէ
վնասել գիւղերի հողանքը, տեղի չէ՞ն ու
նեցել սաստիկ հեղեղներ և կարկուտներ,
չէ՞ն կոտորել երկրագործների կենդանիները,
չէ՞ն առհասարակ չէ՞ն պատահել զանա
զան աղէտներ՝ երկրի այս ու այն անկիւ
նում: Ուրիշ երկրներում այդ երեւոյթնե
րը ուսումնասիրելու համար գոյութիւն
ունի ընթացիկ վիճակագրութիւն
կամ ստատիստիկա կոչված կազմակեր

պութիւնը, որ կարողութիւն է տալիս
պարբերաբար ժողովել տեղեկութիւններ
յայտնի ծրագրով և յետոյ նրանց մշակե
լով ստանալ երկրի վիճակի մասին եզրա
կացութիւններ:

Սակայն ընթացիկ վիճակագրութեան
կազմակերպութիւնը շատ լուրջ գործ է
և իրագործվում է մեծ աշխատանքով և
ծախսով: Հարկաւոր են բարեխիղճ և խե
ղացի աշխատաւորներ, հմուտ ղեկավարու
թիւն և ամենաուշագիւր վերաբերմունք
թէ՛ դէպի փաստերը և թէ՛ նրանց լուսա
բանութիւնը: Սակայն, եթէ առայժմ դը
ժուար է կազմակերպել լուրջ հիմքերի
վրա ընթացիկ վիճակագրութիւնը,
կարելի է փորձել մի ուրիշ աւելի հեշտ
եղանակ, որի ամենաազդող փորձը արել է
Ամերիկայի և որին սկսել է հետևել
Ռուսաստանում երկրագործութեան մի
նիստրութիւնը: Այդ միջոցը հետևեալն է:
Միմաստրութիւնը դիմում է երկրի զանա
զան տեղերում ցրված խոտիգներու ոյժե
րին և հրաւիրում է նրանց պարբերաբար
թղթակցել, հաղորդելով տեղեկութիւններ
մի յայտնի ծրագրով: Փորձը ցոյց տուեց,
որ այդ եղանակով ժողոված տեղեկու

թիւնները շատ բաւարար են լինում ճշ
գրութեան կողմից և երբ թղթակցութիւն
ների թիւը շատ է, նրանք տալիս են
ստորգ դադափար երկրի ընթացիկ վիճակի
մասին: Մի քանի գեմաութիւններ Ռուսաստա
նում, որոնց մէջ ամենանշանաւորը այս
գործում Մոսկովային է, գործադրեցին
նոյն միջոցը առանձին նահանգների վե
րաբերութեամբ և ստացան բաւարար հե
տեւանքներ:

Կարելի է նոյն փորձն անել և Անդր
կովկասում: Եթէ կենտրոնական հիմնար
կութիւններից մէկը, օրինակ կովկասեան
ստատիստիկական կոմիտեան, կամ
աշխարհագրական ընկերութիւնը, կամ
այլ ինչ-որ կենտրոնական վարչու
թիւնը յանձն առնէին կանոնաւոր կեր
պով մշակելու ստացվող տեղեկութիւն
ները, կարող էին նոյնպէս դիմել մեր երկ
րի զանազան տեղերում ապրող խոտի
գներու անձերին, հրաւիրելով թղթակցու
թիւններ ուղարկել որոշած ժամանակա
միջոցներում: Նոյն այդ հիմնարկութիւն
ները կարող էին ժողովել և՛ մամուլի մէջ
երեւացող տեղեկութիւնները և բոլոր միա
սին մշակելով, կարող կը լինէին պատկերաց
նել երկրի ընդհանուր և ճիշդ վիճակը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՈՎՔԵՐ ԵՆ ԶԱՐԱԳՐՈՒՆԵՐԸ

Պետերբուրգի լրագրողները վերոկեցուցիչ տե
ղեկութիւններ են հաղորդում Նոր-Նախիջևանի
մէջ օրը ցերեկով տեղի ունեցած այն ահուկ
կոտորածի մասին, որին զոհ դնաց հայ աղքատ
ների խնամատար եկեղեցական հոգաբարձու
թիւնը: Նոր-Նախիջևանի քաղաքագլուխ Բալա
բանով մի քանի աշխատակիցների աղակցու
թեամբ այդ թշուառ հիմնարկութեան գլխին մի
շաբթ անպակի գործողութիւնների կատարեց, որ
վերջ ի վերջոյ աղքատախնամ հոգաբարձութիւ
նից անհետ կորաւ 100,000 ռ. մի գումար:

Երկար է այդ «բաղադրութեան» պատմու
թիւնը և մենք նրան չենք կրկնի: Յնարկելով այս
խոշոր փաստի վրա, մենք չենք կարող չը յայտ
նել, որ Նոր-Նախիջևանի ամբողջ հայ հասարա
կութիւնը արատաւորված է, իբրեւ մի միջնա
վայր, որ հնարաւոր էր այսպիսի անախտու
թեամբ կողոպտել որբերին: Քստմենելին այն չէ,
որ մի կամ մի քանի գիւղատիգներ են լայն ընկ
նում, այլ այն, որ դրանց արաքներին հաւա
նութիւն է տալիս հասարակութիւնը և տալիս է
լոկ այն պատճառով, որ գիւղատիգները դիքով
մարդիկ են, հարուստ են, կապեր ունեն քաղա
քի ֆինանսական հիմնարկութիւնների հետ: «Պ.
նախագահը ոչ մէկի կողմից գիւղատիգներ չը
տեսաւ, ամենքը խոնարհվում էին նախաձեռ
նողների հեղինակութեան առաջ»—ասում է մի
ուսու լրագիր: Այստեղ մենք տեսնում ենք մի
ամենատարր աղայապաշտութիւն, տեսնում ենք
մի ամբողջ, որ իր ուժեղ գործիչին մեծարած
լինելու համար թող է տալիս նրան կողոպտել
մի այնպիսի բարեգործական հիմնարկութիւն,
որը պիտի սրբէ թշուառ արտասուցներ: Դրանից
աւել էլ ինչ անբարոյական բան էք երևակայում...

Համարեա ամէն տեղ վերացել է աղայակա
նութիւնը, համարեա գիւղերին էլ յայտնի է
դարձել, որ հասարակութիւնը ինքը պիտի լինի
իր գործերի տէրը, ինքը պիտի խնամ հաշիւ
պահանջէ իր գործիչներէն, լինեն նրանք փողի
տուրքակներ թէ՛ հասարակ մահկանացուներ: Եւ
անա այսպիսի ժամանակ, մի մեծ քաղաք, որ
այնքան մօտ է խոշոր կենտրոններին, ցոյց է
տալիս մի այնպիսի տեսարան, որ գուցէ տեղի
ուսնեար մի հարկւր տարի առաջ, երբ չը կար
հասարակական կարծիք, երբ հօգրները կարող
էին անել ինչ ուզում են: Այն ժամանակները
հասարակութիւնը չունէր կարողութիւն, չունէր
նոյն իսկ իրաւունք: Իսկ այժմ, երբ մի հասա
րակութիւն կամաւոր կերպով հրաժարվում է իր
իրաւունքներից, իր լուս. համաձայնութիւնն է
տալիս այնպիսի հրէշաւոր գործերում, մենք ի
րաւունք ունենք ասելու, որ չարագործները մի
այն կողոպտողները չեն, այլ և նրանց բարեհա
ճութիւն և ստրկական խոնարհութիւն ցոյց տը

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲԱՇՈՆ

(Պատկեր)
(Վերջ)

Անգլիոյ կենդանին զարմանալի հնազանդու
թեամբ սկսեց քայլել այդ փոքրիկ յետակ հան
դիսաւոր զանդաղութեամբ: Մինչև այդ ժամա
նակ այդ բոլորը կատարեալ անտարբերու
թեամբ դիտող ընկերը յանկարծ առաջացաւ. դէպի
«Իր» եղը, իսկ այս ու այն կողմից հետաքրքր
բաղմութիւն հաւաքեց և շրջապատեց եղանը,
երեսպային ու բրդին:

—Ի՜նչ, դէ՛ն, ճանաչա՞յ տու՛նք, ձվու՛մ էր Թու
մօն, մերն ի, թորդէ՛ տանն, մեր Բաշօն ի, մա
տաղ էղինձ Բաշօն:

Եղը շարունակում էր գնալ. ընկերը նրանց
առաջը փակեց:

—Ի՜նչ ես անում, տղա, ասաց նա, թող տուր,
ո՛ր ես տանում իմ եղը:

—Մերն ի, մեր Բաշօն ի, բեղ ինչ, կը տանն,
պատասխանեց Թումօն, աշխատելով առաջ գնալ:

—Ձերը չէ, մեռնեմ քեզ, ասաց ընկերը քաղց
րութեամբ, ինն է, մատաղ, թող տուր, մի տար:

—Ապէ՛ ջան, այ պապէ՛, ճաշք երեսման բար
կացած ու լապակամած, բայց առանց թողնելու
եղան ախանջը, ընկերը չէ թորդում Բաշօն բե
րեմ է Է...

Ղարօն ձայնը չը լսեց, նա չէր էլ երևում,
որովհետեւ շրջանաձև բոլորած բաղմութեան յե
տեւում էր մնացել իր տեղում նստած: Նա չէր
կարողանում տեսնել, թէ ինչ է կատարվում
այնտեղ, միայն լսում էր իր Թումօնի յուսաշատ
մանկական աղաղակները:

Քիւրդը տեսաւ, որ գործը քանի գնում մե
ծանում է, նա ծանրակշիւ առիթներ ունէր

այդ հանդամանքից վախենալու. նա լաւ հաս
կանում էր, որ այդ փոքրիկ չէ սխալվում.
այդ եղը՝ Բաշօն, այն երկրից էր բերվել, որ
իր արևմտաւորաւ եղբայրների ձեռքով մոխրա
կոյտերի էր վերածվել, ուր մարդիկ իրանց բո
լոր ստացուածքը, բոլոր ունեցած չունեցածը
տալով հանդերձ մի ստրկական կենսի վարելու
իրաւունք անդամ ձեռք բերել չէին կարողա
ցել, և փախել էին այնտեղից առանց յետ նա
յելու: Եւ միթէ չէր կարող պատահել, որ այս
եղը չէր պատեղ նստած գաղթականներից
մէկն ու մէկին պատահէր: Այս մտքերը մի
վայրկեանում անցան ըրդի գլխից. նա վճռեց
խոյս տալ և այդ կասկածաւոր տեղից հեռացնել
եղը, ուստի մօտեցաւ, որ կենդանու ախանջը
դուրս քալի երեսպայի ձեռքից. բայց նա կախ
վել էր իր բոլոր մանկական ոյժով, չէր բաժան
վում, ձգում էր:

—Մեր Բաշօն ի, չեմ տալ, պապէ, այ պապէ...
Քիւրդը վերջապէս տեսնելով, որ այդ փո
րիկից հեշտութեամբ աղատվելու ճար չը կայ,
մինչդեռ շտապելն անհրաժեշտ է, տալով հրեց
Թումօնի եղան առաջից: Երեսման ընկաւ և
սկսեց աղիւղորթ ձայնով արտասովել պոռալով.
«Բաշօն, Բաշօն»: Քիւրդը բռնեց եղը:

Ղարօն լսեց Թումօնի աղիւղորթ արտասովելու
հառաչանքը ձայնը. ապա տեսաւ թէ ինչպէս
ընկերը տանում է իր Բաշօն, այն եղը, որի
հետ այնքան տարբեր վարել է իր արտերը,
կրել է, ձեռնել է իր ցորենը: Բաշօն նրա ամ
բողջ գոմի դարձն էր, նրա սիրելին, նրա երկ
րորդ որդին, ախ... Նրա համար սպանվեց իր
ջահիլ ջիւան կորելը, իր մի հատիկ որդին:
Այսօր՝ երբ առաջին անգամ տեսաւ Բաշօն,
նրան թւաց, թէ իր զուակին է տեսնում, նրա
աչերին է նայում, նրա հետ է խօսում: Ան
թէ ինչու արտասուքները թափվեցին նրա աչ
քերից, վաղնջ կուտակված արտասուքներ. ար

վիշտն էլ մի սահման ունի, որից այն կողմը
տանել այլ ես անհնարին է լինում նոյն իսկ
ամենապինդ սրտերի համար: Բաղդի բոլոր հար
ւածները մինչև այժմ հետզհետէ, կամաց կամաց
էին թափվել նրա գլխին. նա իր չար ճակա
տագրի դաւաճութեան բաժակը միանգամից չէր
խմել, այլ կաթիլ կաթիլ, ահա թէ ինչու նրա
սիրտը չէր պատռվել վշտից, աչերը չէին կու
րացել արտասուքներից և նա կարողացել էր
ապրել, կարողացել էր կրել անպատմելի ցաւե
րը: Բայց այժմ... Օ՛, այս եղը, այդ անդու
գական Բաշօն, իր մէջ միացնելով Ղարօն բո
լոր թշուառութիւնները, միանգամից թափեց
նրա առաջ վշտերի մի ծով, միանգամից բացեց
գեւա նոր փակված վէճերը. սար լինէր և
փլէր, ծայր լինէր և հալվէր, Ղարօն սիրտն
ինչպէս դիմաւոր... Եւ նա արտասովեց, ար
տասովեց տաք, ախորժ արտասուքներով, որոն
ցից նրա կրակված սիրտը հովանում էր, ուռած
կուրծքը թեթեւանում: Արտասովեց բացի ու
րիշ ինչ կարող էր անել. աւելի լաւ կը լինէր
բոլորովին չը տեսնել Բաշօն և նա կը շտապէր
հեռանալ, եթէ կարողանար, եթէ ոտները չը դոյ
դողային, չը ծալվէին. վիպէ է Ստոտուեց, խոյս
կը տար արտասուքներով, որպէս զի չը տեսնէ իր
դժոխային ցաւերի այդ մարմնացումը, իր Բա
շօն. ուրիշ ինչ անէր. փորձէր ըրդից խել այդ
մի հատիկ եղը, այն բոլորից յետոյ մի եղ... Ին
չի համար, ինչի էր հարկաւոր. բայց Թումօն չէ
թողնում, տես, ինչպէս է ձգում նա, ինչպէս
արտասովում է ողբալի ձայնով: Օ՛, ինչ դոնէր
էր բերել Ղարօն միայն ընկեր չը տեսնելու հա
մար, ինչքան ճանապարհ էր կորել, որքան
սարեր ու ձորեր անցել իր այդ արհնարբու
թնամիտներին այլ ես երեքը չը պատահելու հա
մար, բայց... դարձեալ ընկեր...

Ղարօն զգաց, թէ ինչպէս մի ինչ որ բան
եռաց իր կրծքի մէջ, թէ ինչպէս մի գործը հո

սանք անցաւ նրա բոլոր ջղերի մէջ, շարժեց,
ցնցեց, դողացրեց մարմինը, մկանուները ձգե
ծըղվեցին և լայնացան, մեծացած աչքերը վառ
վեցին կատաղութեան կրակով. զայրայթի, թէ
վրէժիպետութեան փոխորդի էր այդ, որ անցաւ
նրա ամբողջ մարմնով. նրա չնչաւութիւնն ընդ
հատվում էր, արևին սկսեց աւելի և աւելի ա
րագութեամբ շարժվել երակները մէջ, սրտի
բաբախումը սաստկացաւ, ձեռք որոտող մէջ
զարթեց արևն թափելու, սպանութիւն գործե
լու անցալ, անյայտիկ տեսնել. Թումօն ձգում
էր, հառաչում էր, և Ղարօն թւաց, որ այդ
ընկերը, Օ՛, դարձեալ ընկերը, Թումօն էլ սպա
նեց, սպանեց օրը ցերեկով, շուկայի ահալին
բաղմութեան մէջ. դէ ընկերը, երբ սպանել կա
մենայ, ում կը նայի, ում կը հարցնի. քիչ այդ
պիսի դէպքեր են եղել այն «վէրան» երկրում.
Ղարօն համոզված էր նախ իսկ, որ այդ անի
ծեալ ընկերը այն ձիւնոտ սարերի յետեւից յատ
կապէս դրա համար է վերակցել եկել, յատկա
պէս Թումօնի մորթելու համար է պատեղ հա
սել, այդ արդէն անտանելի էր. Ղարօն յանկարծ
ամեն բան մոռացաւ, այլ ես ոչինչ չէր յիշում,
ոչինչ չէր տեսնում, չը գիտէր, թէ ո՛ր է դրան
վում. մի հատիկ միայն գիտակցութիւն մնաց
նրա գլխում, այդ այն էր, թէ անմիջապէս
պէտք է այդ զարհուրելի ըրդի կոկորդ կորել,
ինչով և լինէր: Եւ հա՛ն նա կատաղած վեր ցատ
կեց տեղից, մի անթափարկում պատուեց ամբու
խի չղթան, հասաւ բրդին, և բաղմութիւնը մի
այն այն ժամանակ տեսաւ Ղարօն, երբ նա
երկու ձեռքով գրկած յաղթանակաւ ըրդ իրանը,
զաղանի կատաղութեամբ կրծում էր իր ախո
յանի կոկորդը: Ամբոխը ստոման ձիւ արձա
կեց. դա կու՛ չէր, այլ մի ուրիշ զարհուրելի
բան. միայն կատաղած էր վաղը կարող էր
պղպկէս կրծել իր ձագուկները թշնամու կոկոր
դը: Քիւրդը ցաւից ուռնում էր, ձիւ էր գործ

7. _____

տեղի ունէր ռաբակոմոլիսն: Ամէրիկացիները հազար ուսում արձակեցին: Սպանիական մի քանի ուսումներ ընկան թշնամու նաւերի վրա: Ռեմբակոմոլիսն տեղի ունէր ծովափի երկարութեամբ:

ՄԱԴԻԻԿ, 6 յունիսի: Լուր է պտտում, որ Վաւարէի նաւատորմը ճանապարհ կ'ընեն դէպի Բոստոն՝ Միացեալ-Նահանգներէ մի քանի նաւահանգիստները ռաբակոմոլիսն համար: Ուրիշ լուրերին նայելով, նաւատորմը կ'երթայ դէպի Ճիւլիանեան կղզիները:

ԳԻՔԻԱՆՏԱՐ, 7 յունիսի: Սպանիական նաւատորմը անցաւ հինգշաբթի, երեկոյեան, արեւելեան ուղղութեամբ:

ԼՕՆԻՍԻ, 7 յունիսի: «Times»-ին հեռագրում են, որ իրական ներս խուժումը Վուրայում յետաձգված է մինչև աշունքը:

ՆԻԼԵՅՈՒԿ, 7 յունիսի: Հոնկոնգից հեռագրում են, որ հազար ապստամբներ յարձակում գործեցին Մանիլայում սպանիացիների երկու անդամ աւելի զօրեղ զորաբաժնի վրա և համարեա տիրեցին Մանիլայի մոտակայ: Յետոյ ապստամբները գրաւեցին ջրանցքը, որը ջուր է մատակարարում քաղաքին:

ԼՕՆԻՍԻ, 7 յունիսի: «Times» լրագրին հեռագրում են Հոնկոնգից, որ Մանիլայի ընդհանուր-հանգանակար ընտանիքը ընկաւ ապստամբների ձեռքը, որոնք տարան երեք հազար զերիններ, բայց նրանց հետ լաւ են վարվում: Մանիլայի սպանիական արքեպիսկոպոսը եկաւ Շանհայ:

ՄԱԴԻԻԿ, 8 յունիսի: Մանիլայի անձնատուր լինելու լուրը՝ ձիշգ չէ:

ԲԵՐԼԻՆ, 6 յունիսի: Ընտրութիւնները Բերլինում. 1 չըջանում կոնսերւատորներն Լանդէրհոմուլի (ազատ մտածող) և Պէտլէլի (սոցիալ-դէմոկրատ) մէջ, 2-ում կոնսերւատորներն Կրէյտիցի (ազատ մտածող) և Ֆրէյզի (սոցիալ-դէմոկրատ) մէջ, 3-ում կոնսերւատորներն Լանդէրհոմուլի (ազատ մտածող) և Հէյնէի (սոցիալ-դէմոկրատ) մէջ, 4-ում ընտրված է Զինգեր (սոցիալ-դէմոկրատ), 5-ում կոնսերւատորներն Զինգերի (ազատ-մտածող) և Շմիդտի (սոցիալ-դէմոկրատ) մէջ, 6-ում ընտրված է Լիբերտ (սոցիալ-դէմոկրատ):

ՀԱՄԲՈՒՐԳ, 6 յունիսի: Առաջին չըջանում ընտրված է Բէքէլ (սոցիալ-դէմոկրատ), երկրորդում ընտրված է Ֆրից (սոցիալ-դէմոկրատ), 3-ում ընտրված է Մէյցլէր (սոցիալ-դէմոկրատ): ԲԵՐԼԻՆ, 6 յունիսի: Արեւմտեան չըջանում ընտրված է Շէյնանկ (սոցիալ-դէմոկրատ), Արեւելեան չըջանում—Տուտտուր (սոցիալ-դէմոկրատ):

ԲԵՐԼԻՆ, 6 յունիսի: Ընտրութիւններ: Յայտնի է 317 ընտրութիւնների հետեանքը. դրանց թուով ընտրված են՝ 29 պահպանողականներ, 5 կայսերական կուսակցութեան պատկանողներ, 68 կենտրոնի, 4 ընթացիկների կուսակցութեան, 5 ազգային—ազատամիտներ, 4 ազատ մտածողների դաշնակցութեան, 32 սոցիալ-դէմոկրատներ, 8 լեհացիներ, 1 դանիացի, և 5 պայքարողներ: 158 կրկնաբար-կոնսերւատորներ են լինելու, որոնց թուով՝ 40 պահպանողականներ, 19 կայսերական կուսակցութեան, 35 կենտրոնի, 7 ընթացիկների կուսակցութեան, 60 ազգային—ազատամիտների, 4 ազատ մտածողների դաշնակցութեան, 35 ազատ մտածող ժողովրդական կուսակցութեան, 9 գերմանական ժողովրդական կուսակցութեան, 9 գերմանական ժողովրդական կուսակցութեան, 84 սոցիալ-դէմոկրատ, 1 լեհացի, 7 վէյմարցի, 6 պայքարողներ: Յայտնի չէ դեռ 80 չըջանողների հետեանքը: Մանիլայի աչքի է ընկնում սոցիալիստների ահաբեկ գործողությունը:

ԿԵՆՏՐԻ, 6 յունիսի: Կէօնի Լրագիրը գրում է, որ սպանիական մամուլի և քաղաքական չըջանողների բոլոր գուշակութիւնները այն բանի մասին, որ իբր թէ Գերմանիան Ֆրիլիանեան կղզիների հարցի մէջ դիտարկում է ժողովրդական իրաւունքները չէզոքութիւնից, —գուրկ է հիմքից: Պաշտօնական սպանիական չըջանողները գերմանական պատերազմական նաւերի Մանիլայ գալը կատարելապէս ընկան են համարում, որովհետեւ գերմանական շահերը պաշտպանութիւն են պահանջում:

ՊԵՐՍԻԱ, 6 յունիսի: Ամբողջ քաղաքը զարդարված է դրօշակներով. փողոցներում ամեն տեղ ժողովուրդը լցված է: Վատաբաղ կարգ և հանգստութիւն է տիրում: Կարծեցեալ անկարգութիւններ և չըջանողականների վերաբերեալ հետապնդները գերմանական էմպարաններ են տարածում Եւրոպայում: Պրագա եկած ուսանողներն կայարանում դիմաւորեց մի պատգամաւոր:

ԲԵՐԼԻՆ, 6 յունիսի: Ժողովուրդը կանգնած էր հրապարակի վրա և փողոցներում, դիմաւորում էր ուսանողներին «ուրայի» ազգականներով և ծաղիկներով: Եր թափում եկողների կողքերում: Բոլոր եկած ուսանողները յայտարարված են Պրագայի հիւրեր: Ռուսաստանից եկան պրոֆէսորներ Լամանսկի, Ֆլորենսկի, Բրանդտ. Սպասովիչ, Վ. Վ. Կոմարով, Պրոկոֆիէվ, Վալդիկ, և ուրիշներ: Սլաւոնական բոլոր երկրներից եկան բազմաթիւ պատգամաւորութիւններ: Եւրոպական քաղաքի կողմից բանկէտ է նշանակված ի պատիւ հիւրերի:

ՍԱՐԱՏՈՎ, 6 յունիսի: Հասաւ արդարադատութեան միմիտորը, որին դիմաւորեցին՝ նաւահանգապետը, քաղաքային դռման և դատատանական և ուրիշ վարչութիւնների ներկայացուցիչներ: Երեկոյեան դատաստանական հիւնարկութիւնների շինութեան մէջ դատաստանական վարչութեան պատկանող անձանց ժողով է նշանակված:

ՊԱՐԻՅ, 6 յունիսի: Փորը 2 1/2 ժամին ընդունեց Բրեօն, որին յանձնեց նոր միմիտորութեան կազմակերպութիւնը: Բրեօ խնդրում էր յետաձգել մինչև վաղվայ երեկոյն, որպէս զի նախ քան ասելը, թէ կընդունէ նոր միմիտորութեան կազմակերպութիւնը, —խորհրդակցի դաւադան քաղաքական գործողների հետ:

ԿՍՆԵՅԱ, 6 յունիսի: Անուանի քաղաքացիները դիմեցին ծովապետներին մի նամակով, որի մէջ պատահաւոր են անտանում ինքնավարութիւն մտնելու ձգտումը, մասնագիտաց են անում քրիստոնեաների յաղված գրութեան վրա, պահանջում են թիւքաց զօրքերի հեռանալը և մի և նոր ժամանակ հրաւեր են կարգում քրիստոնեաներին հանդիստ լինել և հերքում են իրանց վերադրող դիտարկութիւնը՝ վերսկսել թշնամական գործողութիւնները թիւքերի դէմ:

ՅԵՏԵՆԵՅ, 7 յունիսի: Սահմանի վրա ընդհանուր տեղի ունեցաւ: Երկու կողմից էլ սպանվածներ կային:

Կ. ՊՈԼԻՍ, 7 յունիսի: Միմիտորների արտակարգ խորհրդում միմիտ է խիստ միջոցներ գործադրել և մի բանի բառալիծները ուղարկել սահմանից: Բ. Դուռը խոստացաւ արձակել դաշնական վարչական և զինային յանձնաժողով ուղարկեց Ուսկիւրից:

ԿՕՊԵՆՀԱՂԵՆ, 7 յունիսի: Գերմանական բէյստագի ընտրութիւնները վկայում են, որ ուսկիւրեղ են դանիական ծայրերը Հիւսիսային Եւրոպայում:

ՏԱԿԵՆԵՅ, 7 յունիսի: Եկաւ երկրի գլխաւոր հրամանատար գերեզմալ-լէյտենանտ Դուլաօվսկոյ: ՎԵՆԵՆԻ, 7 յունիսի: Յունիսի 5-ին ժամանեց հաղորդակցութեան ճանապարհների միմիտորները և ամսի 6-ին ճանապարհ ընկաւ Սէմպալայինսկի:

ԿԻԵՎ, 7 յունիսի: Հասաւ Բուխարայի էմիրը: Երեքշաբթի նա ճանապարհ է ընկնում Օդեսա: ՀՈՒՍՏ, 7 յունիսի: Բուլղոնի հաղորդեց պատգամաւորների ժողովին, թէ միմիտորութիւնը հրամարական է տակաւ:

ՊԵՐՍԻԱ, 7 յունիսի: Պալազու յիշատակը տօնելու համար եկած ուսու հիւրերի պատկին բանկէտ կազմեց, ուր բուլղոմիտոր ուղչուեց եկողներին: Պրոֆէսոր Բրանդտ (Մոսկվայից) շնորհակալութիւն յայտնեց: Կայսերական դատարանի անդամ Սոկոլովսկի ուղչուեց լեհացիների կողմից: Վ. Վ. Կոմարով ներկայացրեց արծաթէ պսակ՝ որպէս նուէր Պետերբուրգից և ուղերձ սլաւոնական բարեգործական ընկերութեան կողմից: Բազմաթիւ հեռագիրներ են ստացված:

Կ. ՊՈԼԻՍ, 7 յունիսի: Բ. Դուռը յայտնեց, որ սահմանի վրա տեղի ունեցած ընդհարումը վերջացաւ: Զափաւանդրած են այն լուրերը, որ իբր թէ սահմանի վրա կանգնած են 20,000 արաւաքներ:

ՊԱՐԻՅ, 7 յունիսի: Բրեօ յայտնեց Ֆորին, թէ իրան բաւական ուժով չէ զգում ներկայ հանգամանքներում միմիտորութեան կազմակերպութիւնը յանձն առնել:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 յունիսի: Հրատարակված է բարձրագոյն հրաման, որով փութում են գլխաւորապէս մեքենաներ, գործիչներ, հող պարարտացնող նիւթեր և քիմիական արդիւնքներ ու նիւթեր բերելու պայմանները:

Արձակվում է ծառայութիւնից, խնդրեցով, ֆինլանդական մեծ իշխանութեան միմիտոր-ստատոս-սեկրետար գեներալ Ֆոն-Իէն:

ՊԱՐԻՅ, 8 յունիսի: Փոր կը կանչի Սարվէնին: Եթէ Սարվէն աշուղութիւն չը գտնի, նախադա՛ն կը դիմի Կիւպուին:

ՊԵՐՍԻԱ, 8 յունիսի: Ակադեմիայում, ի պատիւ

Պալազու կայացած հանդիսաւոր նիստից յետոյ, տեղի ունեցաւ բանկէտ, 560 հրաւիրվածներով: Արտասանվեցին շատ ճառեր: Ապա կայացաւ հանդիսաւոր ներկայացում թատրոնում: ՊԱՐԻՅ, 8 յունիսի: Սարվէն յանձն առաւ կաղմի միմիտորութիւն և պատասխան կը տայ վաղը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ			
Յունիսի 5-ին			
Լոնդոնի վրա 10 ֆունտ արծէ	94	Բ. 45	Կ.
Բերլինի վրա 100 մարկ	46	»	27 1/2
Պարիզի վրա 100 ֆրանկ	37	»	40
Պոլսի վրա 100 ֆրանկ	—	»	—
Մադրասի կուպոններ	149	»	—
Ռոստային դիսկոնտ	5	»	6 1/2
4% պետական ընկաւ	101 1/2	»	—
4% ներքին փոխառութեան	100 1/2	»	—
4 1/2% քաւ. Թղթ. ազն. կալ. բանկ	—	»	—
4 1/2% վկայակ. գել. հող. բանկ	100 1/2	»	—
5% առաջին փոխառութ.	286	»	—
» երկրորդ	248	»	—
5% քաւ. Թղթ. ազն. կալ. բանկ	217 1/2	»	—
5% պետական երկաթուղ. ընկաւ	—	»	—
Պետերբ. քաղ. կը. ընկ. օբլ. 5%	100 1/2	»	—
Մոսկվայի քաղաք. կը. օբլ. քաղաքացիներ	101 1/2	»	—
Օդէսայի	100	»	—
Թեֆլիսի	100 1/2	»	—
Թեֆլիսի կալ. բանկ 6%	102 1/2	»	—
» 5%	100 1/2	»	—
» 6%	102 1/2	»	—
» 5%	100	»	—

Խմբագիր՝ Ա.Լ.ԲԱՍԻՆԻՐ ԲԱՆԿԱՅԻՐ
Հրատարակիչ՝ Ա.Ե.ԴԻՍԱ ԱՐԹՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՐ ՀԻՍԱՆԻԱՆՈՑ
Բ. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆԻ
(Կուլիա, Վորոնոյի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամէն օր, բացի կիրակի օրերից:
Ա. Ռ. Ա. Ռ. ՕՏՆ ԵՐԸ
Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ—11—12 ժ. վերաբուժութեան, վնասեղանի (սիֆիլիս) և միլիանա. հ.
Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
ԿԻՆ ԲԻՇԿԱՆ. Ի. ԲՈՒԿԵՆԿՈ—10 1/2—11 1/2 ժ.: կանանց և երեխայից հ., ծաղիկ պատուաստում:
Զ. Ի. ԲԱՐԱՆԱՍԵԱՆ—11 1/2—12 ժ. կանանց հիւանդ.
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1 1/2 ժ. ներքին և երեխայից հ.
Ա. Գ. ԳՈՒՐԿՈ—1 1/2—2 1/2 ժ. ներքին, և միլիանա. հ. ախտի, կոկորդի և քիթի հ.
ԵՐԵՎԱՆԵՐԸ
Վ. Մ. ՄԱՎԻԼԱՅԷ—6—7 ժ. ներքին և երեխայից հ. նեարդային և միլիանա. հ.
Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ—6 1/2—7 ժ.
Տ. Ի. ԲՈՒԿԵՆԿՈ հիւանդանոցում բժշկական և խոշորացուցական հետազոտութիւններ է աւանդում մէկի, խիստ արեւմտ. կաթիլ և այլն:
Վճար 50 կ. քաւ. քարերը ձրի: Համախորհրդի (Կոնսիլիում) և օպերացիայի համար առանձին: Հիւանդանոցի վերադասում:
127—150 Բժշկապետ ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ

ՄԱՍՆԱԻՐ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
Մ. Ս. ՄԱՆԴԻՆԵԱՆՑԻ

Ընդունվում են տղաներ պատրաստելու արքունական միջնակարգ դպրոցների և վերաբնութիւնների համար: Ուսումնարանում ընդունվում են ԳԻՇԵՐՈՒԿՆԵՐ: Ուսումնարանը գտնվում է Սաղօօյա փող. № 54, Օրիորդաց երրորդ զինագիծի հանդէպ:
(Ե. հ. շ.) 1—5

ԼՈՂՍ ԽԵՍԱԼ
ԻՍՏԱՆԿ ԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ
Նոր աշխատութիւնը
ԶԳՈՑՄՈՒՆԻՔՆԵՐԻ ԵՃԻՍԸ
(Վէրք Հայաստանի մասին)
ԳԻՆԸ 30 ԿՕՊԵԿ 2—3

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie

ՖԱՆՏԱՐԱԿԱՆ ՆԱԽԱԳՆԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԵՅԻՅ ԲԱՌՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթ մի անգամ, սկսած յունիսի 25/6-ի չորեքշաբթից, եւ հակառակը՝ ԲաՌՈՒՄից Մարսէ, մտնելով Տրապիզոն, Սաւսոն և Պոլիս: Մեկնում է ԲաՌՈՒՄից՝ չորեքշաբթի, 10/22 յունիսի ՄԻՆԳԻԼԻ չորեքուր, նաւապետ ՇԵԼՏ: Եւ այսպէս շաբաթական, երկու շաբաթ մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ: ԲաՌՈՒՄից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով: Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակալներին: ԲԱՌՈՒՄԻՄ—պ. Վիկտոր ԳԱՐԻՆ, Նաբէլ-ժոյա: ԹԻՖԼԻՍԻՄ—պ. Օ. Գ. Բարեկեղաւ: Նեանի, Սիօնի փող. նախկին Արծուտ քաղաքապետ: ԲԱՌՈՒՄ—պ. Ս. Կիլլարեան, Կոլլարեան կիսնայա հրապարակ: ՆՕՎՈՐՈՍԻԹՅԱԿ—պ. Միլիտար Հերշեյնդերին: (Ե. հ. շ.) 17—20

ՖԻԶԻԿՈ-ՄԱԹԵՄԱՏԻԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
ԲՆԱԳԷՏ-ՈՒՍԱՆՈՂ
որոնում է դասեր: Համաձայն է և ուրիշ տեղ գնալ: Հասցէն. Սոլջակ, Ստարո-Ռուս տիտուսկայա փողոց, տուն Տէրեանի, № 7, Մատրոսովիչին: 3—10


«Բեսարաբիայի ԲելՏ քաղաքի գիւղերից մի-նում, մի հայ կալուածատիրոջ երկու երեխաներին զինագիտելու առաջին և երկրորդ դասարանները պատրաստելու համար՝ հարկաւոր է մի

ՀԱՅ ՎԱՐՈՒՅԻ
որը լաւ գիտենայ հայերէնի հետ՝ ուսուցիչը մաթ. և արտագրութեան, ֆրանսերէնի ու գերմաներէնի բոլոր վիճակները, ու դաս տալու իրաւ էլ կարողանայ նաւապետի շահուրդը: Պայմանները շատ աջող են. բնակարան, ճաշ և լաւ ուտիւի. առնուաչն մի տարի միայն: պատասխանատուութեամբ: Պայմանների մանրամասնութիւնները մասին գիտել կամ Դ. ՕՐԴԵՅԵՆ (Бессарабия), священнику Затянуку и кав. г. РЫД-ЦЫ (Бессарабия), Апопу Сергеевичу Поповичу воч. Еленовка. 6—10

ԼՈՂՍ ԽԵՍԱԼ
ԼԵՆԻՆ ԽԱՆԱԿԱՆԻ
Գիւղատնտեսական գործիքներ եւ մեքենաներ
Բացարարական բաւարարում և 250 նկարով: Հրատարակութիւն Թիֆլիսի հայոց Հրատարակչական ընկերութեան:
ԳԻՆԸ 50 ԿՕՊԵԿ.
Դիմել՝ ТИФЛИСЬ Общество изданія армянск. книгъ, Баронская, 12. 19—40

ԱՐԵՆԱՅՏՏՆԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ

ԲՕՑԵԱԼՆԵՐ



ԳԱՇՆԱՄՈՒՐՆԵՐ



ՖԻՍ-ՀԱՐՄՈՆԻՈՒՄՆԵՐ, ԶՈՒԹԱԿՆԵՐ, ԿԻՌԱՌՆԵՐ, ՖԵՑՏՆԵՐ, ԿԼԱՐՆԵՐ, ՉԱՑ-ՆԱԽԱՅԵՐ, ԼԱՌԵՐ, ԵՒ ՍՅՈՒՆ, ԵՒ ՍՅՈՒՆ:

Բոլոր տեսակ գործիքների համար գինը կարելի է վճարել մաս-մաս:

ՆՈՐ-ՊՐԵՏՅԱԿՈՒՐԱՆՏՆ

ուղարկվում է ձրի:

ԵՐԱՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՄՆԵՐԻ ԵՒ ՉԱՑԱԼ-ԽԱՅԵՐԻ ԿՈՎԱՍՏԱՆԻՔՆԵՐՏՐՈՒԿԱՆ

Դ Ե Պ Օ

Բ. Մ. ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ

Մատակարար Կայսերական Նրաժշտական Ընկերութեան

Музыкальное депо Б. М. Мириманяна, ТИФЛИСЬ.

Дворцовая ул., д. Т. Д. 3. Банка. 17—20